



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՆ ՀԱՅՈՑ
DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թի 146
 Օգոստոս 6, 1990

Ազնուափայլ
 Տիկին Անահիտ Վերսանեան
 Լորենս.

Ազնի Տիկին Վերսանեան,

Ստացած ենք 20,000 (քսան հազար) տոլարի ձեր նուէրը՝ յատկացուելու համար Մայր Հայրենիքէն Միացեալ Նահանքներու այցելութեան բերուած 20 որբերու անհրաժեշտ ծախքերուն:

1988 Դեկտեմբեր 7-ի աւերիչ երկրաշարժէն ետք Առաջնորդարանս ամէն միջոց ի գործ դրաւ իր մասնակցութիւնը բերելու Հայրենիքի վերակառուցման աշխատանքներուն: Ուրախ ենք որ թաղամասի մը տնաշինական աշխատանքները ընթացք առած են եւ յոյս ունինք որ նոյն թափով պիտի շարունակուին:

Վերակառուցման աշխատանքի կողքին, Առաջնորդարանս նախաձեռնեց նաեւ աղէտեալներու բժշկական խնամքի կապակցութեամբ հայ բժիշկներ մարզելու օգտակար ծրագրին, եւ այսօր տասնեակ մը բժիշկներ իրենց փորձառական շրջանը կ'անցընեն Նիւ Եորքի հիւանդանոցներուն մէջ:

Չուզեցինք նաեւ անտեսել երկրաշարժի ընթացքին իրենց ծնողները կորսնցուցած հայ մանուկները: Եւ ծրագրուեցաւ անոնցմէ խոսք մը, թիով քսան, բերել Միացեալ Նահանգներ եւ ջանալ անոնց հոգեկան կեանքը բարելաւել եւ գոնէ ժամանակի մը համար մոռցնել անոնց ունեցած ահաւոր հոգեկան ցնցումները: Եւ Յուլիս 20-էն ի վեր այդ անծնողք հայ մանուկները կը գտնուին Միացեալ Նահանգներ: Եւ մենք կը ջանանք անոնց կեցութիւնը ընել հաճելի եւ յիշատակելի: Տեղեկացանք որ այս քսան մանուկներէն 17-ը մկրտուած չեն: Հետեւաբար որոշեցինք Չորեքշաբթի Օգոստոս 8, երեկոյեան ժամը 7.30-ին զանոնք մկրտել եւ Սուրբ Միռոնով օծել՝ Ս. Վարդան Մայր տաճարին մէջ: Ուրախ՝ ենք որ այս երախտներու մկրտութեան կնքամայրութիւնը սիրով ստանձնեցիք:

Մեծապէս գնահատելի է այս նպատակին համար ձեր ցուցաբերած վերաբերմունքը եւ մատուցած նիւթական առատաձեռն օժանդակութիւնը: Միայն որբութիւն տեսած ու ապրած անհատներն որ կրնան յաւագոյնս ըմբռնել անոնց հոգեկան խռովքն ու տառապանքը: Եւ դուք՝ ձեր այս ազնուական արարքով՝ այդ մանուկներուն դէմքին ծայր ու հոգիին ուրախութիւն կը բերէք: Անոնց բերնով եւս շնորհակալութիւնը կը յայտնենք ձեզի:

Այս առթիւ անգամ մը եւս կը փափաքինք մեր երախտագիրութիւնն ու գնահատանքը յայտնել ձեզի՝ անցեալին Առաջնորդարանիս հանդէպ ձեր ցոյց տուած հետաքրքրութեան եւ ազնի վերաբերմունքին համար:

Կ'աղօթենք որ Աստուած վարձահատոյց ըլլայ ձեզի եւ դուք տեսնէք իրականացումը ձեր բոլոր փափաքներուն եւ իղձերուն: Կը մաղթենք նաեւ որ Տիրոջ Աջը պահապան ըլլայ ձեզի եւ ձեր հարազատներուն:

Աղօթարար

Խաժակ Ծ. Վրդ. Պարսամեան
Առաջնորդ

Յ. Գ. Հանգէք ներիակ գտնել Առաջնորդարանիս համապատասխան ստացականը: